



## 26. Թ Ա Ն Թ Ո Ռ Ո՛Ր՝

Աստված ձրգի բարին տտ, գոթի շէղնիք, ծաղրատեղ դառնաք մըջ ախշըրին:

Ժուկով ժամանակով մարդ մե կէղնի, ուր անուն՝ Թաթոս, հըմա գեղացիք չեվելորդ անուն դրած՝ Թանթոտ կըսեն: Էդի կապրեր բլբլուկ քոխի մե մեջ. ըդրան կնիկ մե կեր, նա՛ էրեխա, նա՛ մալ, օր կը ճարեր, օր կապրեր, իմալ կըսին՝ զինք դրի սուտ ծոռթնն՝ վանքի հավեր կուտեր:

Էդի կնիկ մ՛ուներ՝ ուրնե շատ խելոք, տան մեջ ժած էկող, տնա-րար, հմա ի՛նչ էներ խեղճ, օր ուր մարդ գոթու մեկն էր, ըսկի բանի շը կէներ, էգ չապով լե չըմնօր դավի-դառարի մեջ են, ձեն ուրանց ներքին թաղեն կը հասներ վերին թաղ, վերին թաղեն՝ ներքին: Գեղացիք սովոր ըգտնց բնութքին՝ կը լսեն չըմեն հաղ, իմալ ժամի ղանգերու ձեն, տավարի բոբոռոց, յա ջան հաջոց: Մեծեր կը խրատեն, թքեն, մրեն զԹանթոտն, հմա ասսու չերեսեն չընկուկ պըղ-տըկներ կը տեսնեն թե շէ, կը բոռեն:

Մ՛ու Թանթոտ՝,  
Մ՛ուտ խելառո՛,  
Գոթու մեկն իս,  
Տախտակ պակաս,  
Հըտ քու կնկան  
Կը լկկաս:

<sup>1</sup> Թանթոտ (քրդերեն)—լիկած լոռ, ժածիկ (Մ. Բ.):

Թանթոռոն կը կատողեր, կզեր քար կառներ, օր զարկեր, էրե-  
խեքն, իմալ ճնճղու քոմ՝ կը ցրվեն, փախնեն դես-դեն: Հմա սուտ  
օր ըսինք՝ մեղք կը դնինք վըր մեր հոգուն, Թանթոռոն քարով կը  
վախցուցեր, թե օր՝ մեկն ու մեկին բռներ՝ չըր ծեծի, զանկաջ կը  
քաջեր, թորկեր կէրթեր հըտ ուր ճամպուն:

Օր մե էլման մարդ ու կնիկ գընկնան մըջ դավի-դառաբին: Մըջ  
չու ու փալասին պառկուկ՝ անոթնե չըն կոնա քնի: Անոթին կոնա՞  
քնի: Դուրս հմալ ցուրտ է, կըսիս խիլամաթ, տուն դրսեն ցուրտ,  
կուչ ու պարզ կէնին, մեջք-մեջքի կիտան, խուլասա՞ լուսադեմին կը  
քնին: Լուս կը բացվի, Թանթոռոն զաջքեր կը բանա, կը ճմլտկա, ար-  
մունկով կնկան կը խտե:

— Ա՛ռջի,— կըսե,— դինա՞ս ինչ չընցավ մտքովսի:

— Ի՞նչ,— կը հարցու կնիկ:

— Խուզըլ մըզի տղեմ՝ էղներ, ես ընդրան հմա՞լ պահենք:

— Տո՛, գո՛թի, դքու գլուխ չըս կոնա, պահի, տղա՞ գուզիս:

— Հա՞, գինամ չորին կը հեռոտիս, տղա չըս չուզի, աղջիկ  
դուզիս, օր մեծնա, գլուխդի քթվե, զանիծ հանե: Աղջի՞կ, վո՛ւա,  
տաս աղջիկ մեկ փարի չըմ առնի: Տղեն ներսի պատ է, աղջիկ՝ դըր-  
սու, օր մե չէ, օր մե՛ ընդրան գուզին տանին հարս:

Տղա-աղջիկ, աղջիկ-տղա, իմալ օր ըսինք՝ մարդ ու կնիկ մըջ  
տեղին կը կովին, կը զարկին, ճանկուտին չիրար, հմալ կը ճվան ու  
բոռան, օր ձեն կէրթա հասնի դրկեցնեբուն: Ձենի վրեն գիկան,  
զբանի էութեն գիմնան, կըսին.

— Ձի չկա, մսո՞ւր կը կապիս, գո՛թի:

Մարդ ու կնիկ հանդե ըռըկած, չըն խոսա հըտ չիրար: Մեկն  
չերես գարձուցի էս պատ, մեկն՝ էն պատ: Հմա սովորութք է, կնիկն՝  
ինչ խդեր խելոք՝ էլման չը կոնա առանց խոսալու մնա, էնի օր չը  
խոսա, փոր կը պատուի, ջան չեռ գիկա: Ըռըկուկ՝ ըռըկուկ, մեկ  
լե կնիկ զձեն կը բարձրցու:

— Դու ե՞ր պտի ախշատիս:

Մարդ չը լսելու կիտա:

— Քու հետ իմ, է՛, անկաջդի չորի՞ն փակիր:

Մարդն էլման չը լսելու կիտա:

Կնիկն դթուլ տեղ կը բռնե. — Մ՛էրթա, թըղ կնկտիք ծիծղան  
վըր քըզի:

— Միծղան վըր ընձի՛: Տո՛, կը լսի՞ք, իմա՞լ էրկինք չը բլի,  
քարեր չըն բոռա, ջրեր չըն կանի, ըպա խո՞սք է, օր ընձի կըսի՞ս:

— Վարամ թալուկ գոթի, սուտ ծոռութեն դրի՛ զվանքի հավեր  
կուտե:



— Ձեռնդի, շան դեմ:

Խոսք մե իդրնե, խոսք մե ըզրնե, կը կպին չիրար, ձեռն կը բռնե ախշար, հմալ կը ճվան ու բռռան՝ կըսիս Սիմոնա արնխում շաշնեթ թալեր ին վըր գեղին, փախեփախ է, մեր զմանուկ մոռցեր է: Ըպա ի՛մալ կնիկ ձեռն չը թալե գլուխ, ավեր տան մեջ նա՛ պտղունց մե ալուր, նա՛ հավի աչքի խոբր եղ, նա՛ ձավար-բլղուր:

Նստուկ վըր պաղ թունգրան՝ կնիկ մարդուն կիշկե, մարդ՝ կընկան:

Թանթոռոն ուր բան գինա, էնի հազըր տղի հեր է: Մըջ գեղին ղվըռնելու գախ՝ կը լսե օր հարսնիքմ՝ պտի էղնի, հմա շիտակ չը գինա է՞ս շաբթուն, թե՞ գալ շաբթուն: Ուր քեֆին դես-դեն զվոնելուց չետե, գիկա տուն, հմալ կը մտնա, կըսիս շաղջեն զաղուն աղցի, բերի տուն:

— Կնի՛կ, լսե՞ր իս:

— Ի՞նչ:

— Քոսի Սրգեն ղտղեն կը կարգե:

— Է՛, քըզի ի՛նչ:

Թանթոռոն կը ճիտկնա:

— Ի՛մալ ընձի ինչ, դեղ կոնա՞ առանց ընձի հարսնիք էնե:

— Ը՛, քու արև մեռնի, քու մոտ ըսկի ամոթ չկա:

Կըսին անամոթի չերես թքուցին, ըսեց՝ անձրև գիկա: Խուլասա՛ հարսնքի օր գիկա, դու-գուռնի ձեռն կը բռնե զգեղ: Քոսի Սրգեն մեծ պատրաստութեն է տեսի՛ կով ու օխշար ին մորթի, Մշու քաղքեն ռազի ին բերի, Բաղիշու՝ քաղցրեղեն ու պտղեղեն: Սրգե տուն կը գմա՛ իմալ շաղաջ: Դրկեց աղջըկներ ու կնկտիք կը գուզվին-զարդըրվին, տղեկներ կը հագնին ուրանց թաժա շորեր, պառըվներ ըիլա կը խլվլան, բուռնութի կը քաջին պնչներ ուրանց, մեկին կը գովան, տասին կը բամբասին:

Բարեկամ դրկեցներ ուրախութենի մեջ ին, հմա չըմնուց շատ Թանթոռոն է ուրխըցի, արուն կէռա, գուզե ուտե-խմե, գովընդ ու թոնքի խաղա, ինք վինի՞ց է պակաս, մարդն հազըրորեր է, պտի էրթա հարսնիք: Խուլասա՛ զոռով-խաթրով՝ կառնե զկնիկ, կէրթա, վին կը հանպըտի՛ «Աստված շնորավո՛ր էնե, աչքդ ի լուս» կըսե, կնկան կը թողե դռան չետե, կը քշե սեղնի վերին դեն փաշի պես կը նստի: Ո՞ն կոնա զԹանթոռոն տեղեն հանե, էդի ըսկի կէղնի՛: Հարսընքվորներ դըռ թամ չըն քոմած՝ չառեջ տերտերն ու ռես գիկան, ռես կը տեսնա հանդե Թանթոռոն նստի վերին դեն, պաղբերնած կիշկե, թե ե՛ք պտի վըր սեղնին հաց ու զատ դնին:

— Յա՛,— կը զարմանա ոես,— իդա գոթին չորի՞ն է նստի սեղնի վերին դեն: Տերտե՛ր, դու չըս զա՛րմանա:

— Զարմանալո՞ւմ զարմանամ,— կըսե տերտեր,— զմեր տեղն առեր է, ի՞նչ էնինք:

— Կանի,— կըսե ոես,— ես ըդոր հմալ հանիմ մըր տեղեն, օր զարմանալով զարմանա: — Տղա,— կը կանչե շըհելի մե, անկաջնուվի կըսե,— թոի դուս, խել մե մանցի, սորա վազելով արի, ձե՛: տու, ըսե. «Թանթոոո՛, ժամի բակ՝ խորոտ կնիկ մե կանի, քըզի դուզե տեսնա, վազով գործ կա, կըսե, թըղ շուտ գա»:

Զհել տղեն կէրթա, խել մե կը մնա, դիկա, էն ինչ ոեսն ըսեր էր, կըսե:

— Յա՛,— տեղեն կը թոնա Թանթոոոն,— էդի ո՞ն է, չըմ ճանչնա, կա-չկա իմ քեռու աղջիկն է: Կնի՛կ, դու մանցի, ես հանալտիմ դամ:

Թանթոոո կնկան զաթի հմալ մահանեմ էր պետք, հըտ մարդուն դուս գեղնա, կէրթան ժամու բակ. ի՞նչ կնիկ, ի՞նչ վազ գործ, կը կոահե օր՝ էդի էն յապով, օր ուրին դտեղեն հանեն: Կնիկ լալով, քֆրտելով կէրթա տուն, Թանթոոոն կը վազե հարսընքտում, օր յառեջվա տեղ նստի, կը տեսնա՝ հանդե ոես նստեր է հըտ տերտրոջ: Տերտեր կը քիկա, յանի թե՛ գոթին էկավ, ոեսն աչքեր կը խուլըրե, յանի թե՛ շուտ մե շայնըմի: Թանթոոոն՝ հե՛չ, ուրին շառնե: Տերտերը կը դառնա տանտիրոջ.

— Սրգե, օ՛ւշնած, հարի սեղնի բացել՝ ոազի մե բի, կթղեմ-էրկու թալինք: Գիշերսի բացվեր ենք, իրիցկին զիսի չը ծածկեր է, մըսուկ իմ: Ռե՛ս, դու մըսուկ չի՛ս:

— Չէ՛, վոլա, ես հմա մըջ տեղին ժած գամ՝ ոեսկին հըտքեոին զիսի կը ծածկե: Հմա, Սրգե, դու ոազին բի՛:

— Հետ լե մազա բի, չը մոռնաս,— մեջ կը խառվի Թանթոոոն: Քոմածենը զփոր ուրանց բռնած՝ կը ծիծղան: Ռադին ու կթղեք կը բերին, հետ լե քասե մե՛ տաք-տաք բուղլամա, հոտ կը բռնե շորս դիեն: Թանթոոոն զթուք կը կլու, զպոկներ կը լիզե, տերտերն ու ոես կթղեմ-էրկու կը թալին, ըսկի չըն իշկի, թե էն մեկ հոգեվոր՝ Թանթոոոն ուրին կուտե, կը դողա վըր չոտաց, չիշխնա յառեջ գա: Սրգեն աչքով-ունքով կը հասկըցու, օր զԹանթոոոն դուս էնին, օր զհարսնիք հարամ-զարամ շէնե:

— Տարեք զգոթին մառան, կուշտ մե թըղ ուտե, շայնըմի էր-թա,— կըսե տանտեր:



լսած-ը լսած՝ Թանթոռոն կը վազե մառան, քանիմ՝ կթղա  
ուզի կը թալե, քու ըսածին կուտե, զփոր կը պնդըցու, քանիմ՝ լոշ  
ուր ձեռքով կաննե, կէրթա տուն: Թանթոռո գլուխ տաքցեր է, արուն  
մըջ էրակներուն կէնա, սարից-ձորից կը խոսա՛:

— Տեսա՞ր, օր կըսենք առանց ընծի հարսնիք չէղնի, շըր ալ-  
տընի:

— Տո՛, ըն՛ապուռ անամոթ, գետին շը մտա՞ր, քու յերսի գո-  
ռով փորդի պնդըցուցեր իս, էկի դը՛ւխդի կը գովաս:

— էդի վի՞ն է անամոթ կըսիս, հա՞, — կը բռռա Թանթոռոն, —  
դու դինա՞ս ես ո՞ն իմ: Հլա դու սարը էրե, տես ի՞նչ կէնիմ:

— Ի՞նչ կէնիս:

— Ռեսի ու տերտրոջ պնչնեցուց կը բերիմ, կանի հլա դառնամ  
ոես:

— Ի՞նչ:

— Ռես, վոլա, հմա ոե՛ս:

— Սև դեր վըր քըզի, էդ լեզուն օր չէղնեք քու բերան՝ մկս  
անծրղնեք զաչքերդի հանած ին: Տո՛, անոթի շուն, դոնեդուռ յընկի  
հաց կը մուրաս, հլա մեծ-մեծ լե կը հաջաս: Թ՛ֆո՛ւ, քու յերեսին մե-  
ռոն չկա:

— էդ ընծի կըսի՞ս:

— Հա, քըզի:

— Տո՛, օղորդման, ընծի՛:

— Հա՛, գո՛թի, քըզի հաց շը պտի տան, քզի աղու պտի տան,  
ուտիս, սատկիս:

Խոսքմ՝ ըդրնե, խոսքմ՝ ընդրնե՛ կը խառվին յիրար: Կնիկ, դու  
կնիկ, քունջ ու պուճախ գընկնա, վարոց մե կը գտնա, ու ա՛ն հա  
մարդու գլխուն, փիջանուն, մեջքին, քու ըսածին կը ծեծե, կը քջե  
դուս:

— Դե, գնա ոես էդի, — կըսե, գդուռն խայիմ կը փակե:

Թանթոռոն շան պես ծեծվուկ՝ կէրթա նստի քարի մե: Գարնան  
պաղ գիշեր, հմա՛լ պաղ քամի մե կը զարկե սարից, օր կը մտնա  
չուրի օսկըռնեքու ծուծ: Կը դողա, յակոեք յիրար կը զարկե, կը  
կծկի, կը բացվի, պաղի, կէղնի փետ. չիշխնա նա՛ դուռն մոտենա, նա՛  
ձեն հանե: Չարեն օր կտրի՛ գելնա գողտուկ կը ցլա գրկեցի թավլեն,  
տաքութենից քիչ մե օր կը լկի, քուն գիկա, գընկնա քընի մըջ մտին:  
Մութ-լուսուն գրկեց կը մտնա թավլեն, օր գթրիք թափե, կը տեսնա  
մեկ մե հմալ կը խուրցու, բոռալով կը փախնի դուս:

— Հասե՛ք, մեր թավլեն սատանա է փայդա էդի:

Մարդիկ, փետով, փետատով, գանակ-խարջըկաթով, բոռալով  
կը մանան թավլեն:

— Յա՛ Մշու սուլթան սրբ Կարապի, դու խափանիս զչարք:

— Յա՛ Առաքելոց վանք:

— Յա՛ Թուխմանուկ:

Կրսին, զէրես ուրանց կը խաշակնքին, օր սատանեն աներևութք  
էղնի, կը տեսնան՝ ի՛նչ սատանա, ի՛նչ բան, էդի գոթի Թանթոռոն  
է, կը ծիծղան, քնուց կը հանին, աղեկ մե կը ծեծին, կը հլոնդին  
թավլից դուս: Թանթոռոն հմա չերես-մերես ուռուկ, արընլվիկ՝  
ուրին կը թալե տուն: Կնիկ կը կռահե, օր ըդոր ծեծեր ին, ուր սրտո-  
վըն է, ձեն չը հանե, գելնա՝ կէրթա դաշտ, բանջար-մանջար քաղե,  
բերե խաշե, յա աղցան էնե, ուտին, զփոր ուրանց լըցուն:

Սուպախտան շուտ սատանի բաս գընկնա գեղ: Կրսին ու կը  
ծիծղան. կը քֆրին ու նալըթին, կը քոմին արեկող պատի մե տակ.  
կը խոսին վըր սատանեստանուն, վըր շարքերուն. ամեկ զուրին կը  
գովա, խոսք գիկա կանի վըր Թանթոռոյին: Գեղացիմ՝ կըսե.

— Արեք ռեսին համոզինք՝ թըղ էդ գոթուն դեղեն դուս էնե:

— Յո՛ւր էրթա, — մեջ կը խառվի ուրիշ մե:

— Սև չանատակ, — կը բոռա հեռուտ մե:

էդ քոմոկնեբու մեջ շատ բամբառակ մարդ մե կէղնի, էդի լ՛ն  
կըսե.

— Տղե՛կներ, չըք լսե՞րի իդա խսեն: — Կրսին ժամանակով  
թուրքի սուլթան մե հրամանք կէնե, օր էրթան ուր էրկրի դեղրանուց  
մեկ-մեկ խելառ-գոթի բոնին բերին, հմա օր հասնին Մշու դաշտ՝  
չըմնուն քոմին բերին: Արեք զոես համոզինք՝ զԹանթոռոն ճամպե  
Մշու դաշտ:

— Վո՛լա, օղորդ կըսիս, քավոր Գեվո:

— Ըպա ի՛մալ, ես ե՛ր իմ սուտ ըսի, օր մկա ըսիմ, — կը ճիտ-  
կընա քավոր Գեվոն:

Հալվոր մե, օր անկաջկախ կը լսեր ըդոց, կըսե.

— Չըմ գինա, հանա՞ք կէնիք, թե ձըզի-ձըզի կը վոլոաք: Ռես  
ի՛նչ էնե, մենք ի՛նչ էնենք: Մեծորեք ըսերին. «Յըմեն տուն խելառմ՝  
պտի էղնի, չըմեն գեղ ծուռ մե»: էդի լե մեր գեղի խելառ-գոթին է:  
Աստված չը վերցու, օր ըդոր վրեն ծիծղանք, պտի հմալ էնինք,  
իմալ չառչի հեղ զաջառ կը լծիս, լծի տակ շուղե մնա, հմա չետե կը  
սորվի ուր լծան, զըդոր բերինք ախջատանքի: Յորի՛ն գեղի ամոթ  
թալինք բերընբացնեբու չառեջ: Լսե՛ք, դըռ չըմ վեռջացուցի: Դար-  
տակ խոսքով չորի՛ն գլուխ մըզի ցավցունք: Ախջատանքն է զհո-



դեղեն ադամորդին մարդ դառնուցի: Կոնաք հմալ էնիք՝ օր ախշատանքի գա, էկամ՝ կը փոխվի, չէկամ՝ կը մնա հմալ, հմալ լե կը մեռնի:

— Օղորմի քոս պապուն, օղորդ կըսիս, հմա շընք գինա ի՛մալ էնինք:

— Լծե՛ք ախշատանքի, ուր քրտնքի պտուղն օր կերավ, համն առամ՝ ծեծիք լե՛ չը փախնի,— կըսե հալվոր, գելնա տոտզալեն կէրթա տուն:

Ժամանակ մե գընցնա, Թանթոռոն պարապ-սարապ զվոնելով կէրթա դեղեղրի շաղաշ, կը կանի շեմքին, հալվոր ջաղջպան կը տեսնա, օր ըդրա չերեսգուն թալուկ է, իմալ դեղին մանած, մըջ մտքին կըսե. «Վո՛ւա էդի յոթ օրվա անոթի է, կանի հարց ու փորձիմ՝ սա՛նք»:

— Թա՛թոս, լա՛ո, դու չորի՞ն իս գունդի թալի:

— Չըմ գինա:

— Տղա՛, գոս անոթնե՛ իս հմալ էղի. արի կտոր մե հաց կի: Կուշտ փոր՝ հա՛մ խելք է, հա՛մ անկաջ:

էդ ջաղջպան շատ բարի մարդ կէղնի, հմալ բարի, եր էնի կերեւելը՝ սատանեք ահուց կը փախնեն ջաղջի շողտնեն: Ըդոր աչքին մարդ՝ մարդ էր, գուզեր էղենի թուրք, յա քուրդ: Մեծ բաղարջ մե կը դնե Թանթոռո չառեշ, Թանթոռոն, իմալ անոթի գել՝ քանիմ՝ դախի մեջ կուտե, փոր կը պնդե, գուն գիկա չերես:

— Թաթոս,— կըսե ջաղջպան,— քըզի բան մըսիմ՝ չըս նեղե՞նա:

— Չէ՛, չորի՞ն նեղենամ:

— Մեծորեք կըսին՝ վիր տուն հաց ուտիս՝ ընդրա գերին կը դառնաս: Չըմ ըսի՛ գոս իմ գերին իս, բան մե գուզիմ չիմնամ՝ չորի՞ն չըս ախշատի:

— Ծս լե չըմ գինա, չորի՞ն,— կըսե Թանթոռոն:

— Ութսուն տարի կապրիմ, մարդ չըմ տեսերի առանց բան ու գործի: Թագավոր խսմի լե չը կոնա ապրի առանց ախշատանքի: է՛, շուտուց լսեր իմ,— կըսին՝ ժամանակով թագավոր մե կէղնի, ըդոր մեկուճար տղեմ՝ կէղնի, օր կը մեծնա, թագավոր պապ կըսե. «Տղա՛, դու չորի՞ն ախշատանք չըս սիրի»: Տղեն կըսե. «Ծս թագավորի տղա, չորի՞ն ախշատիմ, թըղ մարդիկ դատին-բանին՝ ես ուտիմ-խմիմ, իմ քեֆին զվոնիմ»: «Չէ՛,— կըսե թագավոր պապ,— ժամանակ պտի գա, օր ավուր հացի կարոտ քաշիս, կը տեսնա՛ս»: Պղորդ օր՝ ժամանակ գիկա, ժողովուրդ էդ թագավորին թախտից կը թալե, չըսպանե, կըսե. «Յե՛լի առ զքու տղեն՝ գնա, չուր դուզիս, քու չերես չընք չուզի տեսնա»: Թագավոր շատ հալվոր կէղնի, գընկնա

Ամպա, կէրթան, կէրթան, կը հասնին քաղաք մե: է՛, քաղքի մարդ՝  
ըսկի մարդուն հա՛ց կիտա, շոնի շըմեն բան փարով է, փարա ունիս՝  
մարդ իս, շունիս՝ գնա մեռի: Շատ օր կանոթնան, տղեն կըսե.  
«Պա՛պ, վոյա իմ խուզում կոտրեր է, ի՛մալ կէղնի»: Պապ կըսե.  
«Լա՛ո, օր քըղի կըսենք՝ շըր ա՛վտընի: Գնա բարի մարդ մե գտի,  
ախշատի ուր մոտ, քանիմ՝ փարա ձեռք րի, հաց առնինք, ուտինք,  
չը մեռնինք»: Տղեն կէրթա, բարի մարդ մե ոաստ գիկա, ըդոր ախ-  
շատանք կիտա, չիրկուն ղհախ կիտա, հլա բան մը լե չեվելի: Տղեն  
ուրախ կը մտնա ջուկեն, հաց, միս, պանիր, քաղցրեղեն կանեն,  
բերե ղնե պապու շառեջ, կըսե. «Պա՛պ, կի՛, թըղ քըզի հալալ էղնի—  
իմ քրտնքի պտուղ»:

Ջաղչպան խսեն օր կը վեռչացու՝ կը տեսնա, օր Թանթոռո աչ-  
քեր լցվի, արտըսուք դուլ-դուլ կիջնա կորի մըջ թուխ բեխերուն:

— Տղա՛,— կըսե ջաղչպան,— չորի՛ն դիլաս: Յելի իդա տոպ-  
րակ ալուր թալ տուն՝ հարս թըղ հաց կողե, դու դառձի արի ջաղաջ,  
էղի ընձի օգնող, եր մեռա՛ իդա ջաղաջ քըզի: Օր դորժի-բանի կսլար՝  
էլ ծաղրատեղ շըս դառնա մըջ գեղին, աժող-չաժող շը վովոա վըր  
քըզի, կապրիս՝ իմալ մարդ կապրի մըջ ախշըրին:

էդ օրվընե Թանթոռոն կը դառնա ջաղչպան, էլ ընոր Թանթոռո  
չըն ըսի, օր մեկն հարցու, թե էդ բեռ աղուն ո՛ւր կը տանիս, տանող  
կըսե.

— Ջաղչպան Թանթոսի ջաղաջ:

